ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Ի ՎԱՐՔԱՒՈՐԵՆԷ ՁԵՄԱՐԱՆԻ

1· Քննութիւնք ընդունելութեան յաշակերտութիւն Հոգևոր ձեմարանի Մայր Աթոռոյս Սրբոյ Էջմիածնի կատարին մի անգամ և ևթ իտարւոջ և այն առուրքք ինչ յառաջ քան զսկիզբն ուսումնական տարւոյ:

2· Յանկացողք մտանել յաշակերտութիւն ձեմարանիս մատուցեն խնդիր յանուն Անենապատիւ-Տէրպապին, ոչ անագան քան զՀնգետասանն Օգոստոս ամսոյ: (Կան· 71 յօդ·):

3· Ընդ խնդրագրին պարտէ առաջի առնել զվկայագիրս ուսման, բարի վարուց, ծննդեան և մկրտութեան և պատուաստման ծաղկի:

4· Նորեկ աշակերտք և ուսանողք գնին ի բժշկէ ձեմարանիս, որ և տայ Տեսչին զգրաւոր տեղեկութիւն գաւոյջութենէ նոցա:

5· Ի դպրոցական դասարանս ընկալեալ լինին առհասարակ ուսելոյքն ի վարժարանս և կամ հրահանգեալքն առանին կրթութեամբ, իսկ յառաջին լսարան ձեմարանիս՝ նորա միայն, որք ունին վկայագիր աւարտման դպրոցական դասընթացից:

6· Ցեւ կանոնաւոր հարցաքննութեան ընկալցին յաշակերտութիւն յամենայն դասարանս ձեմարանիս· իսկ վասն մտանելոյ յԱռաջին Լսարան՝ ենթարկեսցին հարցաքննութեան յայն յամենայն առարկայս՝ զորս կարեւոր համարիցի Ուսումնական խորհուրդն:

Ի-ՆԷՐՈՒՆ· Վասն մտանելոյ յԿ· դասարան պահանջի անթերի գիտութիւն դասընթացից Էրէ-ՆԻՆ եկեղեցական-ծխական ուսումնարանաց· իսկ վասն մտանելոյ ի միւս դասարանս աշակերտք պարտին քննիլ ըստ ծրագրի հաստատելոյ ի Վեհափառ Կաթուղիկոսէն· ի պէտս ՆԵՐՔԻՆ դպրոցաց·

7· Յանկացողք մտանել յառաջին լսարան ձեմարանիս վկայագրով աւարտման դպրոցական դասընթացից· վերստին ունին ենթարկիլ հարցաքննութեան յամենայն առարկայս· ԷՐԷ ԶԻՆՆ ԱՐԱՐԱՆՆ ԱՆՑԵԼ ԿՅԵ Ի ՀԵՐԱՅ ԱՐԱՐԷԼ ԱՆԱՆ ԶՈՄ ՄԻ:

8· Ցեւ հարցաքննութեան ընկալեալ լիցին ի շարս աշակերտաց, որք արժանաւոր դատիցին յՈւսումնական խորհրդոյն:

Ն-Ն-Ն-Ն։ Պահանջի զի ընկալեալքն յաշակերտութիւն լիցին ուշիմք, երկարոգիք, փափկաձայնք, բարեկազմք և բարեբարոյք։

9. ՅԳ. դասարան ձեմարանին ընկալեալ լիցին պատանիք 14 – 16 ամեայք, և ըստ այսմ Համեմատութեան ի յաջորդ դասարանս։

10. Աշակերտք ձեմարանի գիշերօթիկք են ամենեքեան, թէ ձրիավարժքն և թէ թոշակատուքն, որք ստանան զուսումն, սնունդ, հագուստ և զամենայն առողջապահական խնամս։

11. Թիւ ձրիավարժից, որ ի հաշիւ Մայր Աթոռոյս, որոշի յայսմ ամի, ըստ բարեհաճ կարգադրութեան Ամենապատիւ Տեղակալին։ (Կանոնադր. յօդ. 83)։

12. Աշակերտեալքն պարտին կանխաւ մատուցանել ի գրաւ՝ յայսկոյս Կովկասեանք 50 ռուբլիս, իսկ եկեալքն յայլոց վիճակաց Ռուսաստանի կամ ի տար աշխարհաց՝ ռուբլիս 75, որպէս զի հատուցցի այդ ի ծախս վերադարձի նոցա ի Հայրենիս, և և ի գին կորուսեալ և վատնեալ գրենոյ, հանդերձեղինաց և այլոց իրեղինաց։

13. Իւրաքանչիւր թոշակատու վճարեսցէ ի տարին ռուբլիս 200, ի կրկին նուագս. ի սեպտեմբեր և ի յունուար ամիսս։

14. Եթէ թոշակատու ոք ելցէ կամ արձակեսցի մինչև բոլորեալ ուսումնական կիսամեկին, թոշակ նորա ոչ դարձուսցի յետս։

15. Ցամաւնային արձակուրդս, եթէ ծնողք կամ բարերարք կամիցին տանել զորդիս իւրեանց ի Հայրենիս, ծախք երթևեկութեանց նոցա լիցին ի ծնողաց կամ ի բարերարաց։

ՏԵՍՈՒՉ ՃԵՄԱՐԱՆԻ՝ ՍԱՐԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ.

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ։

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ-ՎԱՐՉԱԿԱՆ

ՑԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՑ·

1891 թուի մայիսի 3-ին կազմած Սինոդի օրագրութեան պատճէնը Ուսումնարանական-Վարչական Յանձնաժողովոյս առաքուեցաւ ի գիտութիւն և ի պարտաւորաշաղն անօրէնութիւն։ Յանձնաժողովս այսու յայտարարում է, թէ այսուհետև մինչև ամբառնալն ընտրելի Քահանայապետի ի փառապանծ Գահ Արբոյն Գրիգորի Լուսաւորչի՝ ա) այլ ևս նորոգ ծխական ուսումնարաններ չը պէտք է բանալ· բ) հասարակաց հոգաբարձունները պէտք է շարունակեն իրանց պաշտօնը· գ) յուրաքանչիւր մէջ նշանակած ուսուցիչները և ուսուցչուհիները անխափան վայելում են իրանց արտօնութիւնները, բայի նոր յանիր, որոնք Դ-ից Դ փոքր արտօնութիւն են ստացել· դ) ուսուցիչների նոր յուրաքանչիւր ստորագրուիլ· ե) այն անձանց անունները, որոնք վերջին տարին խնդրանագրեալ լինելով հոգեւոր Հայրապետին արժանացել են նորին Վեհափառութեան շնորհին, բայց ստացուին չեն մուծած յուրաքանչիւր մէջ՝ առանձին թղթով կը ծանուցանուին Վիճակաւոր Առաջնորդներին· զ) պետական և ազգային դպրոցների նորաստարները, ԷՐԷ ՈՒՆԻ ՊԱՀԱՆՋՈՒԹԻՒՆ ԵՎ ՅԱՆԿԱՆ Հայոց ծխական ուսումնարաններում՝ ուսուցչութեան պաշտօն վարել, պէտք է դիմեն տեղական Վիճակաւոր Առաջնորդներին, որոնք, եթէ հաւանութիւն տան՝ իրանց կողմից պէտք է նոցա վաւերական արտօնագրերը Յանձնաժողովոյս առաքեն, որպէս զի հոգեւոր Հայրապետի կանոնաց և հրահանգաց համեմատ տուգուին և պաշտօնի մէջ նոցա նշանակուելու մասին Կոմիտասեան ուսումնարանների Հոգաբարձուին կանխաւ տեղեկութիւն տուի։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

ԵՒ ԱՊԱՀՈՎԱԾ ԲԱՆԴԵՐՈԼՈՎ, ՈՒՂԱՐԿՎԵՑԱՒ ԲՈԼՈՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ

ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԲԺՇԿԱՐԱՆԻ

Առաջին հատորի

ԱՌԱՋԻՆ ՏԵՏՐԱԿԸ.

Բովանդակութիւն: *Առջ.* — *Յառաջաբան.* — *Միկրօբներ.* — *Դէզինֆէկցիական միջոցներ և նրանց գործածութեան եղանակը.* — *Սրընթաց ցաւակից կարմրախտներ:* 1) *Քութէշ* (скарлатина). 2) *Կարմրուկ.* (корь). 3) *Կեղծ կարմրուկ* (краснуха). 4) *Ծաղիկ* (оспа). 5) *Ծաղկի պատուաստում* (оспопрививанiе). 6) *Ջրծաղիկ* (вѣтряная оспа). 7). *Քութէշ, կարմրուկ ու ծաղիկ հիւանդութիւնների գլխաւոր որոշիչ յատկութիւնները.* 8) *Կարմիր քամի* (рожа). 9) *Բծաւոր տիֆ* (сыпной тиф).

Առաջին տետրակի գինն է 70 *կոպ. ամենայն տեղ: Մի օրինակ պահանջողները փողի փոխարէն կարող են ուղարկել երեսուն և հինգ հատ երկու կոպէկանոց մարկա:*

«Հանրամատչելի բժշկարանը» կը հրատարակվի երկու հատորով, իւրաքանչիւր հատորը բաղկացած կը լինի 22—23 *տպագրական թերթից* (44 *տող իւրաքանչիւր երեսում* 6½ *կվադրատ տողերի երկայնութեամբ* № 10 *տառերով*):

Բաժանորդագրութիւնը շարունակւում է. 45 *թերթից* 720 *երեսից բաղկացած երկու հատորի գինը* ԵՐԵՔ *րուբլի է: Մեր բաժանորդները հրատարակութիւնը կը ստանան մաս-մաս* 5—8 *թերթ. իւրաքանչիւր տետրակում:*

Առանձին տետրակները կը վաճառվեն թերթը 10—15 *կոպ. հաշուով:*

Մեր հասցէն. Въ гор. Тифлисъ, Доктору Медицины Григорію Никитичу Тер-Григорьянцъ. Саперная улица, № 7.

Բժշկապետ Գրիգոր Տէր-Գրիգորեանց (Թիֆլիսեցի).